ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների (Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի տանիքի վերանորոգման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.08.2022թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/45 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/45 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ	koshtoyansamvel@gmail.com
2	«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ	vram1867@gmail.com
3	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	gritig@inbox.ru
4	«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	Texqontrol@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները							
		«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ		«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ		«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ		«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ							
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	813600	650000	650000	780000	780000	813000	813000*	813000	813000*

* Մասնակիցների գնային առաջարկները հավասար են:

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2022թ օգոստոսի 26-ին, ժամը 10:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.08.2022թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 **«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ բացակայում է «Կից ներկայացվում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և Մասնակցի կողմից կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը՝ համաձայն սույն հրավերի I-ին մասի 2.7 կետի» նշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում.

6.3.1 Առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝

- Բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

6.3.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում մասնագետի կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին, լրացված չէ վերջիններիս կողմից վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.4 **«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում.

6.4.1 Առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝

- Բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

6.4.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը անհրաժեշտ է փոխարինել «հայտարարագիր՝» բառերով:
- Հավելված N 1.3-ով ներկայացված մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում լրացված չէ մասնագետի կողմից վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2-ից 6.4-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

8.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ օգոստոսի 30-ին, ժամը 10:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 30.08.2022թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

9.1 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.1-ից 6.3-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

10.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցությունների ս.թ 2022թ սեպտեմբերի 1-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 01.09.2022թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Խաչիկ Այվազյան

«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վռամ Բոյաջյան

«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Կոշտոյան

«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Նարեկ Սահակյան

11. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

11.1 Նիստին ներկա մասնակիցների հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություններ՝ սահմանելով յուրաքանչյուր չափաբաժնի համար 5 րոպե տևողությամբ ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11.2 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտին «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի, «ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ի, «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ կողմից ներկայացվել են նոր գնային առաջարկներ, իսկ «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել (հիմք՝ Հավելված 1):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

12.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել **«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ**-ին **,**

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին,**

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ**-ին,

4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

13. Գնահատման արդյունքների մասին.

13.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/

Հավելված 1

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների (Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի տանիքի վերանորոգման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Նախահաշվային գինը	Բանակցությունների արդյունքում առաջարկված գները							
			«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ		«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ		«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ		«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	
			Առաջարկված գինը, ՀՀ դրամ							
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Տեխնիկական հսկողության ծառայություններ	813600	650000	650000	780000	780000	813000	813000*	813000	813000*
Բանակցությունների ընթացքում առաջարկված գները			-	-	600000	600000	639000	639000	640000	640000
			-	-	550000	550000	585000	585000	590000	590000
			-	-	500000	500000	539000	539000	540000	540000
			-	-	400000	400000	450000	450000	-	-
			-	-	-	-	350000	350000	-	-
Բանակցությունների ավարտին առաջարկված գները			650000	650000	400000	400000	350000	350000	540000	540000

* Մասնակիցների գնային առաջարկները հավասար են:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Խաչիկ Այվազյան

«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վռամ Բոյաջյան

«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Կոշտոյան

«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Նարեկ Սահակյան

01.09.2022թ